

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանուղ
Արտադրամական բնակի)

ԾԱՂԿԱՐԱՐ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ



ասնիններորդ դարի Ս. էջմիածնի զարգացած և բազմարդյուն միաբանների շարքում իր պատվավոր տեղն է զրավում ծաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը: Նա հայտնի է եղել որպես նկարող, ծաղկող, նրան անվանել են Սաղկարար:

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի «Բանբեր»-ում (1956 թ., № 3, էջ 131—139) քիմիագետ Տ. Ղաղանչյանը գրել է Սաղկարարի մասին հիմնայլը. «Հայաստանում քիմիայի զարգացման պատմությունն ուսումնասիրելու ժամանակ մեր ուշադրությունը զրավեցին Մատենադարանում պահվող երկու ձեռագիր (№ № 6247 և 9029), որոնք պատկանում են Սահակ Սաղկարար Տեր-Գրիգորյանի գրչին:

Այս ձեռագրերը լրացնում են այն պատկերացումը, որ մենք ունենք 19-րդ դարի կեսերին քիմիական տնայնագործության և տեխնո-քիմիական գիտելիքների աստիճանի մասին երկանի նահանգում»¹:

Տ. Ղաղանչյանը իր հոդվածում մանրամասնորեն խոսում է Սաղկարարի գործունեության մասին քիմիայի բնագավառում:

Իր հոդվածում Ղաղանչյանը խոսելով Հայաստանի ժթ դարի փոքրիկ գործարանների և տնայնագործական արհեստանոցների՝

կաշվի գործարանների, ոսկերչանոցների, կլայնկշանոցների, ներկատների մասին, օգտագործում է Մաղկարարի հիշված ձեռագիրը և եղբակացնում. «Թեպեսուն Մատենադարանում պահվող այդ ձեռագրերը պատկանում են Մաղկարարի գրչին, բայց նրանց մեջ հավաքված «իրատները» մեկի հեղինակություն չեն, այլ արհեստավորական փորձի ամփոփումներ, որոնք անցել են սերնդից սերոնդ և իրենց ուժը պահել են նաև 19-րդ դարում»²:

Հայ մեծ գրող Միքայել Նալբանդյանը շատ կարենոր նշանակություն էր տալիս Սահակ եպիսկոպոսի գիտելիքներին, հատկապես որդան կարմրի հավաքման և ներկի պատրաստության գործում: Նալբանդյանը 1863 թվականի մայիսի 1-ին իր Ղաղարու եղբորը գրած նամակում Սահակ Սաղկարարի մասին գրում է. «...Անանիայի ուշադրությունն եմ դարձնում «coccinelle» ընտանիքին պատկանությունը որդերի պատմության ուսումնասիրության վրա, թեև, որքան մեզ հայտնի է, այդ որդերը գտնվում են «կակտուս» ընտանիքին պատկանող բույսերի վրա. այնուամենայնիվ, նա (որդան կարմրը) գտնվում և աճում է Հայաստանում, Արաքսի հովտում: Առաջին «անդամ նրանց հայտնաբերել է 20-կամ 25 տարի առաջ ծաղկարար, հպիսկոպոս».

1 «Բանբեր Մատենադարան», 1956 թ., № 3, էջ 131:

2 Նույն տեղում, էջ 131—132:

Սահմակը, որի համար և ուսւ կառավարության կողմից արժանացավ ցմահ կենսաթոշակի: Այս եպիսկոպոսը մեռավ 50-ական թվականներին և նրա հետ գերեզման իշխավ (ներկ) պատրաստելու եղանակը: Մինչդեռ, եթե այս վերին աստիճանի թանկարժեք որդերի պատմությունն ու կյանքը լավ ուսումնասիրենք, նաև նրանց աճեցնելու եղանակը, ապա կարելի է Արարատյան դաշտի հայ շինականների բարբառով մի փոքրիկ բրոշյուր հրատարակել և սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել և ժողովել որդան կարմիրը— իսկ դա կարևոր բան է այնտեղի աղքատ շինականների համար: Էջմիածնում տակավին կան մի քանի մարդիկ, որոնցից կարելի է իմանալ, թե ինչ տեսակ բույսերի վրա է գտել հանգուցյալը (այդ միջատները), իսկ եթե այդ մարդիկ չկան, կարելի է նրանք (միջատները) որոնել ու գտնել, չէ՞ ո՞ եթե նրանք ապրել են այնտեղ մինչև հիշալ եպիսկոպոսը, ապա, անպայման, այժմ էլ ապրում են: Բայց առաջին գործն է՝ լավ ուսումնասիրել այս խնդիրը...»³:

Քիմիագետ Ղազանչյանը հիշատակում է Նալբանդյանի կարծիքը Սահմակ Սաղկարարի մասին և այնուհետև ավելացնում է շատ իրավացիորեն: «Միքայել Նալբանդյանի այս գնահատականը Սահմակ Սաղկարարի գիտելիքների մասին ցույց է տալիս, որ մենք Սահմակի տեսորերը պետք է դիտենք որպես իր ժամանակի համար ակտուալ պրակտիկ գիտելիքների ժողովածուներ...»:


Եթե Մ. Նալբանդյանին հայտնի լիներ Սաղկարարի վերոհիշյալ տեսորերի գոյությունը, ապա կարելի է ենթադրել, թե Նալբանդյանը կառաջարկեր, լեզվական խմբագրումից հետո, հրատարակել և Արարատյան դաշտի հայ շինականների մեջ տարածել հենց Սահմակի տեսորերը. մանավանդ որ Սահմակի տեսորերը բացի որդան կարմրից ներկ պատրաստելու խրատներից, իրենց մեջ պարունակում են ուրիշ շատ արհեստներին վրաբերող խրատներ ու գիտելիքներ»⁴:

Մատենադարանում, բացի վերոհիշյալ երկու ձեռագիրից (№ № 6247 և 9020), կան նաև երկու այլ ձեռագիր, որոնք նմանապես պատկանում են Սաղկարարի գրչին, 6246 և 6243 համարների տակ:

№ 6243 ձեռագիրը պարունակում է մանրանկարչության սևագրություններ, մեծ մասը ասեղնագործության համար արված նմուշներ, որոնք գրավել են մանրանկարչությամբ և ասեղնագործությամբ զրադադու:

³ Միքայել Նալբանդյան, «Երկերի լիակատար ժողովածու, համ. 4-րդ, Երևան, 1949 թ., էջ 215.

⁴ «Բաները Մատենադարանի», 1956 թ., մ 3, էջ 132.



ՄԱՂԱՐԱՐ ՍԱՀՄԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսկ № 6246-ի տակ գրանցված ձեռագիրը պարունակում է 321 նկարներ, որոնց մասին առանձին-առանձին բացատրություն է տվել Սաղկարարը: Կան նաև ծաղրանկարներ ժամանակի արտառող երևույթների, ինչպես աշխարհականների և հոգևորականության վիրաբերյալ:

Սահմակ եպիսկոպոսի մյուս աշխատությունն է Մատենադարանի № 9029 փոքրիկ ձեռագիրը: Այս ձեռագիրի մասին պրոֆ.-դոկտ. Ե. Տեր-Մինասյանը գրում է հետևյալը: «№ 9029 փոքրիկ ձեռագիրը պարունակում է մի շարք խրատներ, ավելի ծիշտ՝ ուեցեատներ վարադ անելու, ուսկեզուր պատրաստելու, գրի կող վարադելու, քիչ ուսկեզուր շատ ուսկեզուր, արծաթաջուր պատրաստելու, արծաթաջրելու մասին և այլն: Վերջում խրատներ, թե ինչպես պետք է պատրաստել զանազան ներկեր: Գրքույկը գրել է երևանցի ծաղկազարդ Խահմակ եպիսկոպոս մահտեսի Տեր-Գրիգորյանը իր հոր տանը Երևանում, 1840 թվականի օգոստոսի 28-ին: Գրքի մեջտեղում հեղինակը պատմում է իր ժամանակի անցքերի մասին, ինչպես իրեն հանձնարարվել է ուրդան կարմիր» հավաքել, որ նա կատարել է, ինչպես պետությունը նրան տարեկան երկու հարյուր ոսւրլի ոռնիկ է նշանակել և այլն»⁵:

⁵ Քիմիագիր Մատենադարանի, 1958 թ., № ԺԲ, էջ 54:

Մատենադարանի № 6247 ձեռագիրը, որը կրում է «Բազմավէպ» խորագիրը, ինքնակենսագրական բազմաթիվ նյութեր է պառունակում իր մեջ: Սաղկարար Սահակ Ապիսկոպոսը ձեռագիրն սկսում է Հետուալիսութեան ի դպրանութիւն իմմէ, թէ որպիսի եղանակաւ եմ յառաջ եկեղեց յորովաճէ մօր իմոյ, և թէ յորում ժամանակի եմ եկեղեց յԱթոռու այս՝ միաբան, և թէ յորում ժամանակի եմ եկեղեց ի դպրանատանէն...» (էջ 1):

Համաձայն վերոհիշյալ ձեռագրի տվյալների, Սահակ, իսահակ կամ Սհակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը ծնվել է 1780 թվականին Երևանում, մահտեսի Տ. Գրիգոր քահանայի ընտանիքում: 17 տարեկան հասակում նա տարվել է Ս. Էջմիածին ուսանելու: Նրա հայրը՝ մահտեսի Տ. Գրիգոր քահանան, ուխտում է իր որդուն Նվիրել Մայր Աթոռին, ինչպես նաև Ս. Գեղարդին սպասավորության: Ղուկաս կաթողիկոսի օրով, 1797 թվականի Հոկտեմբերին, բերում են նրան Ս. Էջմիածին, որտեղ մնում է և ծառայում նա 61 երկար տարիներ, մինչև իր մահը՝ 1858 թվականը:

Սահակ եպիսկոպոսը իր «Բազմավէպ» աշխատության մեջ նկարագրում է իր կես դարյան կյանքը Ս. Էջմիածնում: Ձեռագիրը արքեքավոր է Մայր Աթոռի ժամանակակից պատմության համար և արժանի հրատարակության:

Սահակ եպիսկոպոսի նկարագրությունից երևում է, որ իր ժամանակի Ս. Էջմիածնի վանական ժառանգությունը պարուց այնքան էլ նախանձելի դրության մեջ չէր, ըստ ուսման մակարդակի: Ահա այս հանգամանքը ստիպում է Դավիթ կաթողիկոսին՝ ապագա Սաղկարարին հանձնելու, որպես ուշիմ աշակերտի, վաղարշապատցի ոսկերիչ և ծաղկարար Տ. Հովհան քահանային, «արհեստ և գրագրություն սովորելու», «իսկ ՈՄԾ (1801) թվին Հոկտեմբեր ամսոյն, հհան զիս լուսաւորեալ հոգի Դաւիթ հայրն, որ էր անբախտ կաթողիկոսն, Աստուած ողորմի իւր սուրբ Հոգուն, որ ետ նմա, ի վարժատանէն, և յանձնեաց զիս վաղարշապատցի ոսկերիչ և ծաղկանկար և քաջ գրագէտ Տէր Յօհանին աշակերտ յաղագս ուսուցանելոյ զայս ծաղկարարութեանս արհեստ և գրականութիւն» (էջ 1թ):

Դավիթ կաթողիկոսի օրով վանական ժառանգությունը վարժարանը համարյա կազմալուծվել էր և աշակերտները ուսանելու փոխարեն մոմ էին պատրաստում և այլ աշխատանքներ կատարում վանքում: Սաղկարարը Ս. Էջմիածնի ժառանգությունը կատարում էր անհաջող աշխատանքներ և աշխատանքներ կատարում վանքում:

Վարժարանի ուսանողական կյանքի մասին պատմում է Հետուալիսը «...Դարձեալ երթամք վարժատանէն պատմեմք ձեզ մեծամեծսն, զոր անցեալ է ընդ գլխով իմով զանազան պատահմունք, որ երբեմն երբեմն անօգնական և անտէրունչ մնալոյս՝ պատահեալ են, որոց առաջինն են՝ կոշնակէն զանազան, թէ սառոյց կրելն, թէ արքատ ժողովելն՝ և թէ այլ և այլ տեսակէն. և ով ոք որ հինքն են գիտեն զամենայն արարողութիւն կոշնակաց. զայս առնով ո՛չ գոյր, իբրև զմշակք հացագիր՝ ծառայէինք մինչև ցերեկոյ...» (էջ 1):

Այսուհետեւ իր «Բազմավէպ»-ում նա խոսում է նաև վարժարանի մննդի մասին. «Եւ ի նմին վարժատան ինչ ո՛չ ունէաք, այն ձէթն որ վառելու էին տալս, փոլսատան կրակովն փուափու անելով, միսօյ էի շինում ուսում: Ցաւուր միում ճրագի վրայ եփեցինք, որ ձեռքերներս այրուում էր, վեր էինք զնում: Այսպիսի զառն նեղութեամբ որ անցուցինք անդ: Ի ձմեռային ժամանակին սիրտս դահին մեղր ուզեց. մին փարայի քուսա առի, Յ փարայի դոշապ, զրով քուսան արքուցինք և զօշապն խառնեցի եփեցի, որքան կերի, մնացածն զգալն մին փարայի ծախսեցի, չորս փարէս հանեցի, և մնացածն մոնթերին բաշխնեցի, և շատ անգամ շատ մոնթ միմեանցից հայ փողով էին առնում: Ստամպօլցի մին տղայ տոնօյ անուանեալ Խաչատրու կայր սեղանիցն վարդապետաց առաջին, հացն և կերակուրն փախցնում էր, ու պահում էր՝ մոնթերին փոխ տալով հացն» (էջ 6):

Սաղկարարի կյանքի օրերը համբնկել են Մայր Աթոռու ամենածանր օրերին՝ Դավիթ-Դանիելյան վեճերի շրջանին, ինչպես նաև ուսու-պարսկական պատերազմների տարիներին, Տեսրակում հանդիպում ենք նաև ժամանակի դասատուների անունների, որոնք դասավանդել են Ս. Էջմիածնի ժառանգությունը:

Ղուկաս կաթողիկոսի օրով էջմիածնի ժառանգությունը վարժարանի վարժապետն է եղել «Կծծի» անվանյալ Մարգար եպիսկոպոսը, ապա «գարի» Եսայի վարդապետը, որը «Սաղմոսն ետ ինձ բերան անել Գ Գ փառք, յետոյ կանոն կանոն, ու յետոյ Գ կանոնն համար առաւ Սորա ժամանակին անխելք տիրացու Պետրոս և Մանուկ անուն ուն պօլսեցի երրորդ խալիֆայ մի կայր...» (էջ 7թ):


Վերոհիշյալ ուսուցիչներից Հետո դպրոցում ուսուցիչն է լինում «Ժամասաց Մատթէոս եպիսկոպոսն, որ սորա ժամանակին Դավիթ սրբազն կաթողիկոսն առաջին բարերարն էր, հհան զիս ի վարժատանէն և ետ աշա-

կերտ Հանգուցեալ բարեկամեցօղ վարպետին
իմոլ...» (էջ 8):

Ժառանգավորաց վարժարանից դուրս գա-
լուց հետո, ինչպես տեսանք, Սաղկարարը
գնում է Տ. Հովհանի մոտ սովորելու: Այս
մասին նա զրում է. «... Նորին սուրբ Հայ-
րութիւնն անխնայօրէն ուսուց զիս, որշափ
աման իմ տարաւ և որշափ որ ունիմ, ի
նմանէ եմ ընկալեալ բազում տառապահօք.
ինդրելով ի Տեսոնէ զօգնութիւն և պահպա-

պաղայ թուղթ ծաղկելով, որ և ծաղկեցի...»
(էջ 2թ):

Այսուհետև Սահակ Սաղկարարը իր
«Բազմավէպ» տեսրի մեջ խոսում է ժամա-
նակի միաբանական կյանքի մասին: Միա-
բանական կյանքի պայմանները շատ վատ
են եղել: Չմուն միաբանական խոցերի
ցրտությունը նա նկարագրում է հետեւյալ
խորիրով: «Փամանակն այն, ձմեռն էր
սաստիկ ցուրտ, բոխարի ոչ գոյր, զնացեալ



ԱՐԱՐԱՏ ԼԵՌԸ, ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԸ
(Մատենադարանի № 6246 ձեռագրից)

նութիւն, որ և գտի զոր սիրեաց անձն իմ
օգուտ մեզ և պարծանք Սրբոյ Աթոռոյս էջ-
միածնի և սորին արժանաւոր և ազգբնտիր
սրբազնասուրք փեսայիցն և Հոգեոր ծնողացն
և բարերար ողորմած տէրանց իմոց սրբազ-
նագունից» (էջ 2):

Դեռևս փոքրուց Սահակ եպիսկոպոսը մեծ
սեր է ունեցել ծաղկիներ աճեցնելու գոր-
ծում: Այդ սերը նրան դարձնում է ծաղկա-
րար: Նա Հովհան քահանայի մոտ սովորում
է «զծաղիկս», զթունագիրն, զերկաթագիրն,
զծե բասմայ գիրն, զնոտր գիրն և զգիսա-
գիրն նորա ետ ինձ վարպետն իմ զմին թա-

էի դռնապանի քուրսու տակին նստած էի...
ոչ օրինաւոր տեղաշոր, ոչ խալի, ոչ թէշայ,
և ոչ կարպետ, ոչ հին և ոչ նորն՝ ոչ ունէի,
մին հատ դօշակ կայր 2 տեղ մեծ և փոքր
ծակ, և այն ծակ տեղի վրայ էի նստում որ
եկողքն չի տեսնուն որ ինձ՝ իմ արհեստիս
կեօրայ ամօթ չի լինի: Կայց սիրէր լուսահո-
գի Դանիէլ սրբազնն ինձ նուաստիս. ի՞նչ
տեսակ թուղթ, թէ մեծ թէ փոքր մին հատ թէ
2 հատ թէ 10 հատ որժամ տանէի ծաղկեալ
թուղթն մատուցանէի, շնորհէր ինձ մին հատ
Պօլսու ոսկի, որ էր գուղն» (էջ 9թ):

Դավիթ Ե էնագեթցի կաթողիկոսը մեր եկեղեցու պատմության մեջ միշտ բացասական գծերով է բնութագրվում, սակայն նա եղել է լուսամիտ անձ, ինչպես նաև էջմիածնի աշակերտների ուսման և կենցաղային լավ պայմանների մասին մտածող հայրապետ, հակառակ դժնդակ օրերի։ Դավիթ կաթողիկոսի մասին, պատմության էջերում, ինչպես նաև արքիվներում կան բազմաթիվ պատմական փաստեր, որոնք խոսում են Հօգուատ նրա դրական գծերի։

Դավիթ կաթողիկոսի օրով Զաքարիա վարդապետը սկսում է Սաղկարարին հալածել, սակայն երբ կաթողիկոսը այդ մասին տեղեկանում է, բարկանում է վարդապետի վրա, իմանալով, որ Սաղկարարը ընդունակ աշակերտ է, և սասակով Զաքարիա վարդապետին ասում է. «Տէր Յօհաննին թարխան եմ արել, տարին 12 թուման փող եմ տալիս, պատիւ և փիլոն եմ տալիս, մեծ մեծ ընծայ եմ խոստացել նորան, որ նա այդ տղային (խոսքը Սահակ Սաղկարարի մասին է—Վ. Վ.) բան ուսուցանէ, և կամենում եմ, որ 12 տղայ ևս լինեն, բան ուսանին. մէջտեղն մին տղայ կայ, որու էլ նորան ծեծում ես ու զորս ես անում...» (էջ 4):

Սաղկարարի «Բազմավիճա»-ում՝ Հիշատակություններ կան նաև Ցիցիանովի, ինչպես նաև Դավիթ-Դանիելյան գեղագերի մասին, որոնք Հայտնի են պատմության։

Սաղկարարը նկարագրում է նաև Կուտումբչի Երևանյան արշավանքը, ինչպես նաև Դանիել կաթողիկոսի մահը, որի հետ եղել է Երևանի բերդում. Ընդ մինչ էաք մեր ի բերդն ի տանն հաճի նաւուղալին, նստէր Դանիել սրբազն հանգուցեալ կաթողիկոսն. և մինչ վախճաննեցաւ, սկսան կարգ թաղմանն կատարել Երեկոյեանն մութը ժամանակին սհարի 3-ին։ Յանկարծ սկսան զօմպարայ թօփի գիլլայ պարապի մէջն մերձ դագաղին...։ Ապա, նկարագրելով պարսից և ոռուսաց ընդհարումը, ավելացնում է. «...ամփոփեցին հարաւային կողմն ի ներքոյ զանգակատան լուսաւորեալ Հոգի Դանիել սրբազնին...» (էջ 10r):

Սահակ Սաղկարարը 1810 թվականի դեկտեմբերի 10-ին ձեռնադրվում է արեգա, իսկ երկու տարի հետո, 1812 թվականի հոկտեմբերի 12-ին, ստանում է վարդապետական աստիճան։

Հայր Ղնոնդ Ալիշանը նույնպես բարձր է զնահատել Սաղկարարի աշխատանքը որդան կարմիր հավաքելու և ներկ պատրաստելու գործում։ Նա իր «Ալյարատ»-ում, գետեղելով Սաղկարարի նկարը, գրում է նրա մասին. «Ցիցիանութիւնն պարսից ի վերայ երկրիս մերոյ կուսակալք իսկ Երևանայ խնամով տային ժողովի զորդն ի սահմանս վարչու-

թեան իւրեանց և առաքէին ի վայելս պաճուռասէր պարսից, ի փոխանակել զնոսա այժմեան ոռուսաց պետութեան, նոյնպէս առնէին և կողմնակալք հայկական նահանգին, յորոց մի յառաջնոցն և ազգային՝ թե՛րուդեանն թարսեղ՝ յորդորեաց ի գործ զայնու ժամու հուշակեալ Սաղկարար Սահակ Տէր-Գրիգորեան եպիսկոպոս էջմիածնի, զաշակերտ Տէառն Յովհաննու ճարտար գրադի, որոյ յամի 1833 երթեալ ի կողմանս Խոր Վիրապի ժողովեաց իրեկ 50 կշիռ (կիլոգրամ), և առաքեալ առ կովկասեան փախարքայն վարձս և պատիւ առաքեաց եպիսկոպոսին...»։

Սաղկարարը իսկապես լավագույն մասնագետն է եղել իր ժամանակին որդան կարմիր հավաքելու, ներկ պատրաստելու ասպարեզում և մեծ ծառայություն է մատուցել ուսու կառավարությանը։

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի Հրատարակած նյութերից Հայտնի է զառնում, որ Կովկասի կառավարչապետ Ռուփին և ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոս երջանկահիշատակ Հովհաննես Կարրեցու միջն փոխանակվել են գրագրություններ Սահակ Սաղկարարի մասին։ Կաթողիկոսը Ռուփինի գրում է, որ «Թէկ եպիսկոպոսն ըստ պաշտօնի իւրում յայսմ Աթոռոյս Սրբոյ կարի հարկաւոր է մեզ, առանց որոյ գործարութիւն մեծ պատահի ի գործս մեր, բայց այսու ամենայնի գիտելով մեր, թէ հմտութիւն նորա յայսմ մասին տնի զմեծագոյն օգուտ ընծայել տէրութեան...» (էջ 23):

Սահակ եպիսկոպոսն իր մատուցած ծառայությունների համար ոռու կառավարությունից 1834 թվականին նվեր է ստանում ամենախոյա ականակուռ մատանի, իսկ 1839 թվականի հունիսից կայսրը նրան տարեկան 200 ոռուի ցմահ թոշակ է նշանակում։

Հովհաննես Ը Կարրեցի կաթողիկոսը ևս գնահատելով Սաղկարարի ծառայությունները, նրան եպիսկոպոս է ձեռնադրում 1832 թվականի մայիսի 15-ին⁸:

Սաղկարար Սահակ եպիսկոպոսը անձամբ գրադի է որդան կարմիր ներկ ստանալու գործով և այդ ուկտությամբ կատարել է բազմաթիվ քիմիական փորձեր, որոնց մա-

6 Հ. Պ. Ալիշան, «Ալյարատ», Վենետիկ, 1890 թ., էջ 484։

7 Լ. Մելիքսեթ-Բեկ, «Հայաստանում կարմիր որդան ներկի արտագրության պատմություններ», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տէպեկագիր» (Հայարակական գիտություններ), № 2-3, 1946 թ., էջ 17։

8 Օրմանյան, «Ալգապատում», Հատ. Գ, Երևանացի, 1927 թ., էջ 363։



ՍԱՂՐԱԿԱՐ

(Մատենադարանի № 6246 ձեռագրից)

Մին խոսել է 1830 թվականի հունիսին գրած իր նամակում, թե ինչպես պետք է սպանել միջատին և ստանալ ներկ։ Պարզվում է, որ նա փորձել է որդը սպանել սառը և տաք քացախով, քացախով և կրափոշով, մաքով կրազրով, գինիով, ծծմբային գաղով։ Բայց միայն կալաքարի (պոտաշի) շրով ու գինիով նրան հաջողվել է բավարար արդյունքների հասնել։ Այնուհետև նա ստացել է տարրեր ներկեր։ Պոտաշով սպանված որդերից նա պատրաստել է կնքաներկեր և ջրաներկեր։ Մաղկարարների համար նա ավելի լավ է համարում գինու միջոցով սպանված որդերից ստացած ներկերը, որը լաւագոյն գեղեցիկ և պայծառափառ երեկոր քան զեղեալ յորդանէն մեռուցելոյ ի ջուր կալաքարիա⁹։

⁹ Գրոֆ. I. Մելիքսեր-Թեկ, հիշված աշխատությունը, էջ 21:—Տե՛ս նաև S. Ղազանշանի հոդվածը, «Բանքի Մատենադարանի», 1956 թ., № 3, էջ 136.

Մաղկարարի գործով զբաղվողները ցավով են նկատել, որ նրա «Բազմավայշպ»-ից պակասում են զգալի թվով թերթեր, որոնք համարար պարունակում էին գործնական հրահանգներ որդան կարմրից ներկ ստանալու:

Այս առթիվ Սահակ Մաղկարարի ազգական էմին Տեր-Գրիգորյանը գրում է. «Ի՞նչ պես երկում է, այս բնագրից հանված են շատ երեսներ, մինչև անգամ կարծում են հանված է միջից մի ամբողջ տետրակ մոտ 14—16 թերթից, կամ մի քանի տետրակներ այդքան թերթերից։ Այդ ապացուցանվում է նրանով, որ 16-րդ թերթի վերջին երեսը վերջանում է 1815 թվականով, իսկ 17-րդը սկսում է անկապ և 1833 թվականով։ Երկում է նաև ձեռագրում եղած երկու տետրակների կարից և թղթերի գումներից։ Եթե իրոք հանած են այդպիսի տետրեր, պետք է կարծել, որ այդ արված է հորս մահից հետո էջմիածնում միաբանների ձեռքով, կամ երբ ուղարկեցի Վենետիկ Հայր Ալիշանին՝ այնտեղ։ Ես ավելի շատ առաջին կարծիքին եմ քանի երկրորդը» (վերջին էջը):

Ա. Էջմիածնում Մաղկարարից բացի որդան կարմիրով զբաղվել են նաև ուրիշները, նույնիսկ Եփրեմ կաթողիկոսը։

Մաղկարարը մեծ կարևորություն է տվել արհեստներին։ Անսացէք ինչ, — գրում է նա, — թէ ամենայն եւրոպա և Հայոր տէրութիւնք, որ պայծառ անուն ունին, ուստի և պայծառութիւնք նոցա։ ո՞չ ապաքէն արհեստաւորքն են, որ զանազան հնարս գործ ածեն իւրաքանչիւր քաղաքի գործաորքն, իւրաքանչիւր տէրանց, ես ըստ իմ տկար կարեաց ոչ խնայեցի աղքատ քամկին իմոյ և իսկ խնայեմ ինաւ յաղաս զամազան բանիցն ծախուց փորձելոյ և զհնարն գտանելոյ, որ Սրբոյ Աթոռոյն և գանակալի սորին և Սրբազն Սինօդին անունն, եղիշիւրն բարձր առնեմ, թէ ինձ ոչ լինի կամակից և օժնական, ո՞վ է այն, որ զոր տեղն ախմախանալ՝ իւր բակին վնաս տայց (էջ 18թ)։

Մաղկարարը նյութեր փնտոելու համար ճանապարհորդել է Անդրկովկասի մի շարք քաղաքներ, նա 1822 թվականին գնացել է Եղիսաբեթուպոլիս (այժմ Կիրովաբադ) քաղաքը, այնտեղ գտել է մի քար, որը Առաքել պատմագորի կողմից անվանված է «խամահի», որ նույնն է լիրաքարի հետ։ Դրա հետ միասին նա գտել է սկ գույնի քար, որը ինքն անվանել է «հանքային մելան», քանի որ նրանից սկ գույնի շատ լավ թանաք է պատրաստելիս եղել։ Մի այլ տեղ, երբ նա գրտնում է «զահնայ Փոանկի» կոչված հազվագյուտ և թանկագին քարը, փնտում և գտնում

է մի գիրք, որտեղից իմանում է այդ քարի հետ վարվելու եղանակն ու նրա ստացումը:

Որդան կարմիրի հավաքման գործը կազմակերպելիս նա մտահոգվում էր գյուղացիների շահերի պահպանմամբ։ Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ։ «...ի հեռաստանէն եկեալ մշակքն՝ զուր անցուցանեն ժամանակն տրտնչալով և լաւ չէ, որ իւրեանց բանիցն և գործիցն յետ են մնում և շատ մեղք է սոցա բերելն, լաւ այլրաթով մարդն մէկ իստիլ չէ կարելի որ ժողովի։ 2, 3 հոգով որ աշխատին, հաղի կարեն ժողովել մին իստիլ և այն շատ ժուարութեամբ, ըստ որում, որդոն այն, մինչ ելանէ ի բունոյ ի ծագման արևոտ, մինչև 3 սհաթ մնան յերեսս գետնոյն, և ապա կորնչին, որ մին հատ դեղի համար չեն կարող գտանիլ, որ արևն տաքանայ, ոմանց մրջիմն, ոմանց թոշումն տանին, ոմանք ոտնակոխ լինին ի պաճարեղինաց որ անդ տանին արօտ և այսպէս փշանան և կորնչին։ Ասացի, թէ անձրև զայ ընաւ չերեկն, քանի որ գետինն թաց է, որոց փորձն բազում անգամ առեալ եմ։

Թէ լսեն ինձ վասն մշակացն նորին, որ ժողովք ժողովրդոց մեծ բազմութեամբ ժողովում են (ասացի) զուր տեղն, չ օգուտ նորին տէրութեանն, այլ այս է օգուտն, զոր ես վասն նորա տնօրինեցի, և տնօրինեմ։ Այն գիւղն, ուր գտանի որդն, նորա գիւղացւոյն այն ամսոյն ազատութիւն տան թագաւորական հարկէն, և հրամայեն նոցա տունն, որ 10 հոգի աւելի լինեն, նորա տան 5 կամ 4 իստիլ, այն որ 7 կամ 8 հոգիք լինեն, նորա տան 4 իստիլ, այսպէս շամ առնելով, որ ժողովեն, տես քանի քանի օգուտ լինի տէրութեանն և ժողովրդոցն, առաւել նոցա, որը ի հեռաստանէ զան, և ոչ ժողովեն ընաւ, այլ ըստ հարկի պահանջման ասեն նորա, թէ մեք այսքան, այսքան մշակք տուաք այս ինչ ժամանակի, որ շատ ծանր է և զուր նոցա գալն ի հեռաւոտէն։

Սոյն դիտմամբ օգուտ համարելով, գրեալ իմ նորին պայծառափալլութեանն և նորին գերազանցութեանն ևս, փոխանակ պատասխանի շնորհակալութեան, ի նոցանէ ոչ ընկալայ մինչ ցարոյ» (էջ 18թ)։

1836 թվականին Սահակ եպիսկոպոսը փորձ է անում էջմիածնում հիմնելու թղթի գործարան։ Ինչպես ինքն է նկարագրում իր «Բազմավէպ»-ում, թղթի գործարան հիմնելու միտքը նրա մեջ առաջացնում են էջմիածնի տպարանի կազմատնից դուրս գցվող թղթի ավելցուկները, որոնցով տաքացնում էին բաղնիքի ջորը։ Ահա նրա նկարագրությունը թուղթ ստանալու, նկար տպել տալու և իր նախանձախնդրությունը այդ բոլորի նկատմամբ։ «...Յամի Տեառն ի քանիսն ապրիլի, միշտ մտախոհ լինէի վասն կոտորակի թըդ-

թոցն, մանաւանդ, որք ի բերանւոյ մամլոյ կազմարարին թափէին իրբև անպիտան, և առ ոտս կոխուեալ անցանէին և ոչ ինչ համարէին, Հողմատար լինէր, առաջին տպարանին, որ ներսն էր դեռևս տպարանն այնմ ժամանակին, մինչ կամեցայ բերել զնմանէ։ լսեցի, թէ համամշին ժողովեալ է զրազմակոտորակ թուղթան առ ի այրել բաղնիքումն, որ նուազ ջերմասցի ջուրն։ Գնացի բաղնիքանին մոռնաթ արարի, և նա ասաց՝ կէսն այրեցի օգուտ շեղև, կէսն էլ տարի տուն բարձի մէջ զնելոյ, այնմ միջոցի որ թափէին, չէր զարթեալ միտք իմ։ յերբ պակասեցաւ, սկսայ մտախոհ լինիլ վասն եզրահանութեանն, թէ յոր եղանակաւ կարեմ կազմել, որ պիտանի բան լինի, առի և բերի սակաւ ինչ զնմանէ։

Ցաւուր միում աշակերտութեանս ժամանակին պատմեալ էր լուսահոգի Տէր Յօհան վարպետն, որ ինքն 12-ամեայ հասակի իւրում յաւորս բազմաշահ և նորահրաշ Տեառն Սիմէօնի Սրբազն Կաթողիկոսին լիրեանցւոյ, որոյ յաւորսն ծաղկեցաւ Սուրբ Աթոռ մայրս մեր Սուրբ էջմիածին։ վասն թղթահանութեան և տպարանին, որ իրբև զճրադ լոյս տայ զաշխատանն նորա եղեալ ի վերայ աշտանակի, որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ յարքայութիւնն իւրում դասելով ընդ երանելի հայրապետան» (էջ 20թ)։

Սաղկարարը նկարագրում է նաև իր թուղթ ստանալու առաջին փորձը. «Զկնի այսր, ի լուսանալ առաւօտուն, զկոտորակն թղթոց եղի ի մէջ ջրոյ թրչոց, և հանեալ եղի ի մէջ հաւանակի և սանդիտորամբ այնքան ծեծեցի, որ եղել իրբէ զմածուցիկ իմն, և հանեալ եղի մաքուր աման, և լցի նորա վերայ ջուր, խառնեալ եղել կաթնանման, ուշիկ ուշիկ հանեալ եղի ի վերայ կտոր մի մահուդի, ի վերայ տախտակի եղեալ, տարածեցի ձեռքս, դարձեալ մահուդ և հարթ հաւասար տախտակ և քար ծանր եղի ի վերայ նորա մինչև քամեցաւ լաւապէս ջուրն և հանեալ չորացւոցի, կոկեցի, գրեցի, և տեսի, որ ընդունի զգին և ոչ ծեծեց, ուրախացայ, զարձեալ ուրախացայ և արարի 3 հատ մեծն կէս թապաղայի շափ, մինչ աւարտեցի, խնդիր արարի տպարանի վերատեսուչի «Ա» խաչապսակ նիսեայ անուանեալ Յովհաննէս վարդապետին, առ ի տպել զպատկերն Սուրբ էջմիածնի, որ եղ առ գործարանն և տպեաց 3 հատ պատկերն Սուրբ էջմիածնի լստ փափաքանցու եւ ուրախացեալ փառս ետու Աստուծոյ մերոյ, որ առատապէս տայցէ Հոգին Սուրբ Աստուծոյ, որ գիտօղն է ամենայն զալտնեաց և տայ պարգևս առատորէն իննդրողին։

Ասացի, թէ ի կոտորակէ թղթոցն, որք ելանէին ի բերանւոյ մամլոցն կազմարարի, յօ-

րինեցի, տպեցի, և խնդիր մի վասն ալսր, և վասն զանազան գործոց ի վերայ սոյն թղթոյ գրեցի առ նորին Սուլր Օծութիւնն յաղազս ծանօթութիւն տալոյք (էջ 20բ):

Մենք տվեցինք համառոտ տեղեկություններ Սահակ եպիսկոպոս Սաղկարարի մասին: Նա եղել է գործունյա, ցանկացել է էջմիածնում կատարել ուրիշ գործեր ևս, սակայն որոշ հանգամանքներ արգելք են հանդիսացել:

Սաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը իր կյանքի վերջին շրջանում, հաշմանդամ, փոխադրվում է իր հոր տունը՝ Երևան, որտեղ և մահանում է 1858 թվականին:

Մեզ, Ս. էջմիածնի միաբաններիս, այժմ, երբ ամեն չոգաստարություն վայելում ենք մեր Վհեափառ Հայրապետից և ունենք նպաստավոր պայմաններ, մնում է, որ Ս. էջմիածնի միաբանության դարավոր և գեղեցիկ գործն ու ավանդությունները շարունակենք արդյունավորությամբ և պատվով:

Պահճ'նք մեր սրտերում Մայր Աթոռի լավագույն և նվիրված միաբանների աթոռանվեր և եկեղեցաշեն սուլր գործն ու ավանդությունները, զբաղվե՛նք գրով ու գրականությամբ ու շենացնե՛նք Մայր Աթոռ Ս. էջմիածնին մեր աղոթքներով ու աշխատանքով:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

